ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «07» 06 2019թ № 377-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N126-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-րդ մասի

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2019 թվականի փետրվարի 27-ի «Զբոսաշրջության զարգացման 2019 թվականի ծրագիրը, զբոսաշրջության զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը» հաստատելու մասին» N126-Ա հրամանում (այսուհետ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N1 հավելվածի:
2. Հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված N3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N2 հավելվածի:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2019 թվականի «հունիսի» «7»
N 377 - Ա հրամանի

«Հավելված N 1
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի
2019 թվականի «փետրվարի» « 27»
N126 - Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

2019 ԹՎԱԿԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Միավորված ազգերի կազմակերպության զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ ԶՀԿ) տվյալներով՝
   1) 2018 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին համաշխարհային զբոսաշրջային այցելությունների թիվը 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 5 տոկոսով.
   2) վերջին հինգ տարիներին համաշխարհային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է շուրջ 4.5 տոկոս.
   3) 2017 թվականին ներքին զբոսաշրջային այցելությունները համաշխարհային մակարդակով կազմել են շուրջ 5-6 միլիարդ:

2. Համաձայն պաշտոնական վիճակագրական տվյալների 2018 թվականին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 1.651.782՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ցուցանիշը աճել է 10.5 տոկոսով.



3. Համաձայն ՍԷԿՏ-ի տվյալների՝ 2018 թվականին ըստ երկրների այցելությունների քանակը 2017 թվականի համեմատ ունի հետևյալ պատկերը

Երկիրը	2018 թվական	2017 թվական	Աճը 2017 թվականի համեմատ
Ռուսաստան	684013	584561	17
Վրաստան	314341	319902	-1.74
Իրան	160645	220147	-27.0
ԱՄՆ	53744	44587	20.537
Ուկրաինա	32412	29706	9.11
Հնդկաստան	31213	11589	169
Գերմանիա	28655	21011	36.4
Ֆրանսիա	27651	21881	26.4
Ֆիլիպիններ	20363	22007	-7.5
Լեհաստան	15397	13375	15.1
Ղազախստան	12981	7500	73
ԱՄԷ	11901	8299	43.4
Նիդերլանդներ	11898	9101	30.7
Լիբանան	11491	9901	16.059
Մեծ Բրիտանիա	10873	9005	20.7
Իտալիա	10802	8014	34.8
Տաջիկստան	10649	5698	86.9
Չինաստան	9189	5747	59.9
Բելառուս	8656	6951	24.5
Բելգիա	8223	6150	33.7
Հարավային Կորեա	6947	2554	172
Իսպանիա	6922	4803	44.1
Կանադա	6468	4800	34.8
Իսրայել	6319	5294	19.4
Ուզբեկստան	5228	4180	25.1
Ավստրիա	5202	3502	48.5
Իրաք	5106	4063	25.7
Շվեյցարիա	4782	3972	20.4
Հունաստան	4519	3611	25.1
Շվեյցարիա	4428	3784	17.02
Ավստրալիա	4263	2956	44.2
Ճապոնիա	3947	3026	30.4
Չեխիա	3828	3101	23.4
Սիրիա	3298	3089	6.8
Դանիա	2541	2197	15.7
Նորվեգիա	2222	1612	37.8
Լատվիա	1871	1548	20.9
Ղրղզստան	1817	1140	59
Սինգապուր	826	377	119.1

Թաիլանդ	826	610	35.4
Քուվեյթ	608	493	23.33
Նոր Զելանդիա	497	268	85

Տվյալները փստում են, որ 2018 թվականին ընդհանուր այցելությունների մեջ բացարձակ թվով աճ են ապահովել ՌԴ-ից, Իրանից, Վրաստանից, Ուկրաինայից այցելությունները: Սակայն այցելությունները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են Վրաստանից, Իրանից, Ֆիլիպիններից: Տոկոսային առումով կտրուկ աճ են ապահովել Հնդկաստանից, Չինաստանից, Սինգապուրից, Նոր Զելանդիայից, Ղազախստանից այցելությունները:

4. Հիմք ընդունելով 2013 թվականին իրականացված զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտության տվյալները՝ փորձագիտական գնահատականներով 2018 թվականին ներգնա զբոսաշրջությունից ստացված համախառն եկամուտը կազմել է շուրջ 1300 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (մեկ ներգնա զբոսաշրջիկի կատարած միջին ծախսը մեկ այցելության ընթացքում գնահատվում է շուրջ 800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ):
5. 2018 թվականի հունվար-սեպտեմբերին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 964. 656 նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 2.1%-ով: Ներքին զբոսաշրջության աճին էապես նպաստել է նաև սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայությունը, թեկուզև այն կազմում է ներքին զբոսաշրջային այցելությունների ընդամենը 10-15%-ը:
6. 2018 թվականի հունվար-սեպտեմբերին ներքին զբոսաշրջությունից ստացված համախառն եկամուտը փորձագիտական գնահատականներով կազմել է շուրջ 242 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (մեկ ներքին զբոսաշրջիկի կատարած միջին ծախսը մեկ այցելության ընթացքում գնահատվում է շուրջ 250 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ):
7. Ներկայումս ՀՀ տարածքում գործում են ավելի քան 558 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ (հյուրանոց, մոթել, հյուրանոցատիպ հանգրվան, առողջարան, պանսիոն, հանգստյան կամ մասնագիտացված տուն, զբոսաշրջային բնակատեղի (hostel), ճամբար), որոնց հյուրանոցային համարների և ննջատեղերի ընդհանուր քանակը կազմում է համապատասխանաբար շուրջ 14276 և 30350: Նշված հյուրանոցային տնտեսության օբյեկտներից 197 գտնվում են Երևանում, 361 ՀՀ մարզերում: Բացի նշված հյուրանոցային տնտեսության օբյեկտներից Հայաստանում (հիմնականում գյուղական համայնքներում) գործում են շուրջ 250 զբոսաշրջային տներ (B&B):
8. 2017-2018 թվականներին Հայաստանում բացվել են ավելի քան 9 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ (այդ թվում նաև միջազգային հեղինակավոր հյուրանոցային խմբերին դասվող)՝ ապահովելով շուրջ 587 հյուրանոցային համար:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Զբոսաշրջության զարգացումը նպաստում է ազգային եկամտի ավելացմանը, համաչափ տարածքային զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:

2. Ծրագիրն ուղղված է զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության իրականացմանը.

- Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացմանը և թիրախավորված զբոսաշրջային շուկաներում առավել ակտիվ մարքեթինգային քաղաքականության իրականացմանը,
- Հայաստանի համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, տեղական ավանդույթների վերականգնմանը, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, նոր զբոսաշրջային երթուղիների ձևավորմանը և միջազգային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացմանը:

III. ԾՐԱԳՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ծրագրի գերակայություններն են.
   - միջազգային զբոսաշրջային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության ապահովումը և Հայաստանի շարունակական ինտեգրումը միջազգային զբոսաշրջային շուկա,
   - Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացումը՝ համաշխարհային շուկայում ամրապնդել, զարգացնել և խթանել Հայաստանի նկարագիրը՝ որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկիր,
   - հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացումը՝ նպաստել նոր, մրցունակ արդյունքի ձևավորմանը, Հայաստանի ամբողջ տարածքում ավանդույթների և ծիսակատարությունների վերականգնմանը, մշակութային և բնական ժառանգության պահպանմանը և վերականգնմանը, զբոսաշրջային ռեսուրսների գնահատմանը և գույքագրմանը, զբոսաշրջային նոր ռեսուրսների և գրավչությունների բացահայտմանը, զբոսաշրջային նոր, գրավիչ և մրցունակ փաթեթների ձևավորմանը և Հայաստանի մարզերում զբոսաշրջության և հանգստի կենտրոնների ձևավորմանը,
   - Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացումը՝ նպաստել զբոսաշրջության ոլորտում որակի համակարգի ներդրմանը և կատարելագործմանը,
   - միջազգային համագործակցության զարգացումը՝ ապահովել միջազգային, տարածաշրջանային և այլ կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցությունը, այլ երկների հետ երկկողմ հարաբերությունների զարգացումը:

IV. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ծրագրի նպատակն է նպաստել
   1) Հայաստան զբոսաշրջային այցելությունների շարունակական ավելացմանը՝ տարեկան մինչև 8%,
   2) Հայաստանի կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, ազգային եկամտի ավելացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը,
   3) Հայաստանի, որպես զբոաշրջության համար գրավիչ երկրի նկարագրի ձևավորմանը, կատարելագործմանը և պատշաճ ներկայացմանն ու խթանմանը,
   4) Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի համաշխարհային ճանաչելիության բարձրացմանը:
2. Ծրագրի խնդիրներն են՝
   1) ամրապնդել և շարունակական բարձրացնել Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակությունը,
   2) ապահովել ճշգրիտ վիճակագրություն, որակյալ հետազոտություններ,
   3) դիվերսիֆիկացնել հայկական զբոսաշրջային արդյունքը, ձևավորել նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքներ,

4) դիվերսիֆիկացնել Հայաստանի ու հայկական զբոսաշրջային արդյունքի շուկաները, որոշել գերակա նպատակային շուկաներն ու իրականացնել նպատակային մարքեթինգ և խթանում,
5) ապակենտրոնացնել զբոսաշրջությունը դեպի Հայաստանի Հանրապետության մարզեր, այդ թվում նաև գյուղական համայնքներ,
6) համաշխարհային շուկայում ամրապնդել, զարգացնել և խթանել Հայաստանի նկարագիրը՝ որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկիր,
7) ամրապնդել և շարունակական բարձրացնել ծառայությունների որակը,
8) բարելավել և զարգացնել ենթակառուցվածքները,
9) զարգացնել մարդկային ռեսուրսները,
10) ամրապնդել և շարունակական ակտիվացնել միջազգային համագործակցությունը:

V. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1,Ակնկալվող արդյունքներն են՝

1) Ամբողջական և առավել ճշգրիտ վիճակագրության վարման, որակյալ հետազոտությունների և վերլուծությունների իրականացման ապահովումը.
2) Ծառայությունների որակի և մրցունակության ամրապնդումը ու շարունակական բարձրացումը,
3) Հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացումը,
4) Համաշխարհային շուկայում Հայաստանի, որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկրի նկարագրի ամրապնդումը, զարգացումը և խթանումը,
5) Համաշխարհային շուկայում Հայաստանի ճանաչելիության և գրավչության բարձրացումը՝ Հայաստանի միջազգային հեղինակության ամրապնդումը և շարունակական բարձրացումը, համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերությանը Հայաստանի արդյունավետ ինտեգրումը,
6) Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացումը, նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքների ձևավորումը՝ համաշխարհային հանրությանը Հայաստանի ու հայկական պատմամշակութային ժառանգության պատշաճ ներկայացումը,
7) Ծառայությունների որակի և մրցունակության բարձրացումը՝ ոլորտը որակյալ և պահանջարկին համապատասխանող կադրերով ապահովումը,
8) Միջազգային երկկողմ և բազմակողմ կապերի ամրապնդումը և զարգացումը:

VI. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Զբոսաշրջության զարգացման 2019 թվականի ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեն է՝ 286.4 միլիոն դրամի չափով, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին (մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի համաֆինանսավորմամբ):

VII. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

Ծրագիրն իրականացնող կառույցին (կառույցներին) պետական բյուջեով նախատեսված միջոցների վճարումներն իրականացվում են ըստ ներկայացված հայտերի, հաշվի առնելով ծրագրի առանձնահատկությունները, կատարելով կանխավճարների վճարումներ և (կամ) հիմք ընդունելով կատարվելիք ծախսերը հիմնավորող փաստաթղթերը:

Հավելված N 1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2019 թվականի հունիսի «7»
N 377- Ա հրամանի

«Հավելված N 2
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի
2019 թվականի «փետրվարի» « 27»
N126 - Ա հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN	**Միջոցառման անվանումը**	**Ակնկալվող արդյունքը**	**Վերստուգելի չափանիշը**	**Կատարողը (համակատարողները)**	**Կատարման ժամկետը**	**Ֆինանսավորման աղբյուրը**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**
	1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ					
1. 1	**Զբոսաշրջության ոլորտի օրենսդրության կատարելագործմանն ուղղված խորհրդատվության ներգրավում**	Սպառողների իրավունքների ու ներքին շուկայի պաշտպանություն, զբոսաշրջային ծառայությունների որակի ապահովում Զբոսաշրջության ոլորտի վարչական կարգավորման մեխանիզմների ներդրում	Համապատասխան իրավական փաստաթղթեր և ընթացակարգեր	Զբոսաշրջության կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2019թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
1. 2	**Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական,**	Զբոսաշրջային այցելությունների քանակի, զբոսաշրջիկների սեռի,	Առկա ներդրված էլեկտրոնային ծրագիր,	Զբոսաշրջության կոմիտե	2019թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

	տեղեկատվական համակարգի կատարելագործում՝ զբոսաշրջության վիճակագրության վարման մեթոդի ներդրում և կատարելագործում	տարիքի, քաղաքացիության վերաբերյալ առավել ճշգրիտ վիճակագրության համակարգի ներդրման գործընթաց՝ ՍԷԿՏ համակարգի կիրառմամբ և շահագրգիռ պետական կառավարման մարմինների ու դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ Ամբողջական և առավել ճշգրիտ վիճակագրության վարում, որակյալ հետազոտությունների և վերլուծությունների իրականացում այդպիսով նաև ոլորտի պետական քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացի արդյունավետության բարձրացում	պարբերաբար տեղեկատվության ստացում, տվյալների վերլուծություն	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն (համաձայնությամբ)		օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.	**Զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային գործընթաց**					
2. 1.	**Էլեկտրոնային (թվային) մարքեթինգի իրականացում**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացում www.armenia.travel կայքում, ինչպես նաև Ֆեյսբուք (facebook) և սոցիալական այլ ցանցերում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում և խթանում	Կայքի և սոցիալական ցանցերի էջերի վարում, տեխնիկական սպասարկում, բովանդակության լրամշակում, թարգմանություն www.armenia.travel կայքի հասանելիություն առնվազն երեք լեզվով www.armenia.travel կայք այցելություններ (pageviews)՝ առնվազն 500,000	Զբոսաշրջության կոմիտե Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամ	2019թ. ընթացքում 1-ի եռամսյակ	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացում www.armenia.travel կայքում, ինչպես նաև Ֆեյսբուք (facebook) instagram և սոցիալական այլ ցանցերում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի համաշխարհային շուկաներում պատշաճ ներկայացում և խթանում՝ ճանաչելիության բարձրացում	Գուգլ (Google) որոնողական համակարգում հանգուցային բառերի միջոցով առաջնակարգ դիրքավորում, ավելի քան 70,000 այցելություն Ֆեյսբուք (facebook) և Ինստագրամ (Instagram) սոցիալական ցանցերում հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող էջերի օգտատերերի թիվը մինչև տարեվերջ՝ 60000 Հաղորդակցման վարում նաև VK, Telegram, Twitter, սոցիալական ցանցերում: Սոցիալական ցանցերում հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող էջերի օգտատերերի թվի ավելացում. Երկու կարճ հոլովակների ստեղծում (մինչև 1 րոպե տևողությամբ) սոցիալական հարթակներում տարածելու և հարթակների ներգրավվածությունը բարձրացնելու համար	Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2-րդ – 4-րդ եռամսյակներ	
2.2	**Գովազդատեղեկատվական նյութեր բոլոր նպատակային շուկաների համար**	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում և խթանում	Գովազդատեղեկատվական նյութերի՝ առնվազն երեք լեզվով մշակում, լրամշակում և տպագրում՝ առնվազն 40 000 հատ բրոշյուր, քարտեզ, թղթապանակ,	Զբոսաշրջության կոմիտե Հայաստանի	2019 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ

			տեղեկատվական թերթիկ 1 էջի վրա Առնվազն 2 լրատվանամակի պատրաստում և ուղարկում թիրախային կոնտակտների շտեմարանով Տպագիր և էլեկտրոնային գովազդատեղեկատվական նյութերի տարածում տեղեկատվական կենտրոններում, միջազգային ցուցահանդեսներում, ՀՀ դեսպանատներում, www.armenia.travel կայքում և սոցիալական ցանցերով միջազգային միջոցառումներում և լրատվամիջոցներով Առնվազն 3 հատ շուրջ 45 վարկյան տևողությամբ տեսագովազդների մշակում և ներկայացում www.armenia.travel կայքում, սոցիալական ցանցերում, միջազգային միջոցառումներում և լրատվամիջոցներով HD որակի լուսանկարների ձեռքբերում՝ 150 հատ, լուսանկարների զետեղում գովազդատեղեկատվական նյութերում, տարածում սոցցանցերում, թվային մարքեթինգի այլ հարթակներում	զբոսաշրջության զարգացման հիմնադրամ Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	1-ի եռամսյակ 2-րդ – 4-րդ եռամսյակներ	աղբյուրներ
2.3	**«Հայաստանյան և**	Ճանաչողական այցերի	Հայաստանը և հայկական	Զբոսաշրջության	2019 թ.	ՀՀ պետական

	օտարերկրյա լրագրողների ճանաչողական այցերի կազմակերպում»	կազմակերպում հայաստանյան և օտարերկրյա լրագրողների համար	զբոսաշրջային արդյունքը ներկայացնելու նպատակով ՝ -առնվազն 5 երկրների հայտնի և մասնագիտացված օտարերկրյա լրագրողների - հայաստանյան լրագրողների համար առնվազն մեկ ճանաչողական այցերի կազմակերպում -Յուրաքանչյուր այցի արդյունքում մասնակից կազմակերպության կողմից տրամադրվող մեկ նյութ՝ գովազդային տեսանյութ, ՁԼՄ-ներում հրապարակված կամ տպագրված հոդված, նկարահանված ֆոտո և վիդեո նյութեր:	կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	ընթացքում	բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.4	**Մասնակցություն միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին**	Հայկական և օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների միջև գործարար կապերի հաստատում, ցուցահանդեսներին պատշաճ մասնակցություն, Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում ու խթանում՝ արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ	Մասնակցություն և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում 4 միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսների՝ յուրաքանչյուր ցուցահանդեսին ապահովելով առնվազն 7 զբոսաշրջային օպերատորի մասնակցություն	Զբոսաշրջության կոմիտե Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամ Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2019թ. Ընթացքում 1-ի եռամսյակ 2-րդ – 4-րդ եռամսյակներ	ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

2. 5	**Համաֆինանսավորում Հայաստանում միջազգային երաժշտական միջոցառման իրականացմանը**	Հայաստանում անցկացվող միջազգային երաժշտական միջոցառման կազմակերպման նպատակով համաֆինանսավորման հատկացում «Լևով Սակեյան» ա/ձ-ին	Հայաստանի զբոսաշրջային տեսարժան վայրերից մեկում մեկ միջազգային երաժշտական միջոցառման կազմակերպում	Զբոսաշրջության կոմիտե Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամ	2019թ.	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.	**Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում**					
3. 1	**Զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանն ուղղված՝ պատմամշակութային հուշարձանները և բնության հատուկ պահպանվող տարածքները ներառող զբոսաշրջության մեծ ներուժ ունեցող նոր ուղղությունների զարգացում**	Զբոսաշրջության ապակենտրոնացում դեպի ՀՀ մարզեր նոր մրցունակ զբոսաշրջային արդյունքների ձևավորում Զբոսաշրջության տարբեր ձևերի զարգացմանը նպաստում զբոսաշրջային գրավչությունների ճանաչելիության բարձրացում և հանրահռչակում	զբոսաշրջային մեծ ներուժ ունեցող առնվազն 3 նոր ուղղությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ հայեցակարգային մոտեցումների ներկայացում և շնորհանդեսի կազմակերպում	Զբոսաշրջության կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2019թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3. 2	**Պետական աջակցություն ՀՀ մարզերում ավանդական փառատոների կազմակերպմանը**	Համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը նպաստում, հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանն ու մրցունակության բարձրացմանը, տեղական ավանդույթների ու մշակույթի վերականգնմանն ու	Պետական աջակցությամբ առնվազն 5 ավանդական փառատոների պատշաճ կազմակերպում ՀՀ մարզերում Յուրաքանչյուր փառատոնին առնվազն 10 տաղավարով տեղական ավանդույթների,	Զբոսաշրջության կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2019թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		զարգացմանը, հյուրընկալող և շրջակա համայնքներում տնտեսական և մարդկային ներուժի բացահայտմանն ու զարգացմանը նպաստում	տնտեսական, այդ թվում զբոսաշրջային ներուժի ներկայացում			
3.3	**Տեխնիկական աջակցություն ՀՀ մարզերում ավանդական փառատոների կազմակերպմանը**	ՀՀ-ում իրականացվող փառատոների գույքային կարիքների, փառատոների իրականացման պատշաճ որակի ապահովում, զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացմանը նպաստում	Փառատոների կազմակերպման համար անհրաժեշտ գույք և սարքավորում	Զբոսաշրջության կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2019թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.4	**Զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչների և միջազգային դոնոր կազմակերպությունների մասնակցությամբ տարեկան ամփոփիչ միջոցառման կազմակերպում**	Ոլորտի հաշվետու-եզրափակիչ միջոցառում, տարվա ձեռքբերումների և զարգացումների ամփոփում և ներկայացում Զբոսաշրջության ոլորտի տարբեր բնագավառների ներկայացուցիչների խրախուսում	Առնվազն 400 մասնակից, շնորհանդես, մրցանակաբաշխություն, մշակութային ծրագիր	Զբոսաշրջության կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2019թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3. 5	**Հայաստանում ճանապարհային զբոսաշրջային կայանների հայեցակարգի և նախագծի մշակում**	Միջազգային չափանիշներին համապատասխանող ենթակառուցվածքներ, մատուցվող ծառայությունների որակի ապահովում	Տիպային զբոսաշրջային ենթակառուցվածքի հայեցակարգ և համապատասխան նախագծային փաստաթղթեր	Զբոսաշրջության կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2019թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.	**Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում**					
4. 1	**Պետական աջակցություն քայլարշավային**	ՀՀ երկու մարզերում առնվազն 5-ական քայլարշավային երթուղիների նշագրում՝ հայերեն,	10 նշագրված և կահավորված քայլարշավային	Զբոսաշրջության կոմիտե Մրցույթում հաղթող	2019թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե Օրենքով

	երթուղիների նշագրմանը	ռուսերեն և անգլերեն լեզուներով	երթուղիների առկայություն	ճանաչված կազմակերպություն		չարգելված այլ աղբյուրներ
4. 2	**Պետական աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովմանը**	ՀՀ մարզերում զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների միասնական համակարգի ձևավորում՝ տեղեկատվական և մասնագիտական տեղեկատվության տրամադրում, գովազդատեղեկատվական նյութերի տարածում, ոլորտի տարածաշրջանային եռամյակային հաշվետվությունների մշակում և ներկայացում՝ նաև տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությամբ	Տեղեկատվական կենտրոնների գործունեության կառավարման մոդելի ներկայացում, ՀՀ մարզերում առնվազն 5 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը պետական աջակցություն	Զբոսաշրջության պետական կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2019թ. ընթացքում.	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4. 3	**Հյուրանոցային տնտե-սության օբյեկտների (ՀՏՕ) որակավորման և պարբերական գնահատման գործընթացի կազմակերպում**	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման գործընթաց Հյուրանոցային տնտեսության օբյեկտների պարբերական գնահատման գործընթաց	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորում՝ ըստ ներկայացված հայտերի (ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N946-Ն որոշմանը համապատասխան) Առնվազն 4 ՀՏՕ-ի որակավորում և պարբերական գնահատում	Զբոսաշրջության կոմիտե	2019թ. ընթացքում.	ՀՀ պետական բյուջե
4. 4	**Պետական աջակցություն մարդկային ռեսուրսների զարգացմանը**	Ծառայությունների որակի ու մրցունակության բարձրացում Ոլորտը որակյալ և պահանջարկին համապատասխանող կադրերով ապահովում,	զբոսավարների պատրաստման (վերապատրաստման) դասընթացների ծրագիր – ուղեցույց,	Զբոսաշրջության կոմիտե Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2019 թ ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		համաշխարհային հանրությանը Հայաստանի ու հայկական պատմամշակութային ժառանգության պատշաճ ներկայացում, Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացում	առնվազն երկու դասընթացի կազմակերպում			
5.	**Միջազգային համագործակ-ցություն**	Հայաստանի միջազգային հեղինակության ամրապնդում և շարունակական բարձրացում, Համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերությանը Հայաստանի արդյունավետ ինտեգրում Համամարդկային արժեքների պահպանությանը, զարգացմանը, խթանմանը, միջազգային համերաշխության և խաղաղության ամրապնդման Հայաստանի դերի բարձրացում Միջազգային երկկողմ կապերի ամրապնդում և զարգացում	ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության, Սևծովյան Տնտեսական Համագործակցության, ԱՊՀ Զբոսաշրջության խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների և գործընկերների հետ համագործակցության իրականացում՝ մասնակցություն կազմակերպվող միջոցառումներին, Հայաստանում առնվազն մեկ միջազգային նշանակալի միջոցառման կազմակերպում կամ աջակցություն, գործընկեր և նպատակային շուկա հանդիսացող երկրներ փոխայցելությունների կազմակերպում	Զբոսաշրջության կոմիտե ՀՀ արտաքին գործերի նախարարություն Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն	2019թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե

Հավելված 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2019 թվականի «հունիսի» «7»
N 377-Ա հրամանի
«Հավելված 3
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի
2019 թվականի «փետրվարի» «27»
N 126 -Ա հրամանի

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ				
Զբոսաշրջության զարգացման 2019 թվականի ծրագրի				
h/h	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	1- ին եռամսյակ	2-4 րդ եռամսյակ	2019 ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք գումարները (հազար դրամ)
1	**Ինստիտուցիոնալ բարեփոխումներ**		14800.0	14800.0
1.1	Զբոսաշրջության ոլորտի օրենսդրության կատարելագործմանն ուղղված խորհրդատվության ներգրավում		6800.0	6800.0
1.2	Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի օգտագործմամբ զբոսաշրջության ոլորտի վիճակագրության բարելավման աշխատանքների ապահովում		8000.0	8000.0
2	**Զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային գործընթաց**	12172.4	106299.0	118471.4
2.1.	Էլեկտրոնային (թվային) մարքեթինգի ապահովում	4000.0	21000.0	25000.0
2.2	Գովազդատեղեկատվական նյութեր բոլոր նպատակային շուկաների համար	1500.0	27500.0	29000.0
2.3	Հայաստանյան և նպատակային շուկաներից օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների ճանաչողական այցերի կազմակերպում առնվազն 5 նպատակային շուկաներից	0.0	24800.0	24800.0
2.4	Մասնակցություն միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին	1672.4	32999.0	34671.4
2.5	Համաֆինանսավորում Հայաստանում միջազգային երաժշտական միջոցառման իրականացմանը	5000.0	0.0	5000.0
3	**Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում**		31718.0	31718.0

3.1	Պատմամշակութային և բնության հուշարձանները, հատուկ պահպանվող տարածքները ներառող զբոսաշրջության մեծ ներուժ ունեցող նոր ուղղությունների զարգացում		3000.0	3000.0
3.2	Պետական աջակցություն ՀՀ մարզերում ավանդական փառատոների կազմակերպմանը	0	12000.0	12000.0
3.3	Տեխնիկական աջակցություն ՀՀ մարզերում ավանդական փառատոների կազմակերպմանը (սարքավորումների ձեռքբերում) Պետական աջակցություն ուղղված ՀՀ-ում իրականացվող փառատոների գույքային կարիքների ապահովմանը		9200.0	9200.0
3.4	Զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչների և միջազգային դոնոր կազմակերպությունների մասնակցությամբ տարեկան ամփոփիչ միջոցառման կազմակերպում		5518.0	5518.0
3.5	Հայաստանում ճանապարհային զբոսաշրջային կայանների հայեցակարգի և նախագծի մշակում		2000.0	2000.0
4	**Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում**		17400.0	17400.0
4.1	Պետական աջակցություն քայլարշավային երթուղիների նշագրմանը		3000.0	3000.0
4.2	Պետական աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովմանը		9900.0	9900.0
4.3	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների (ՀՏՕ) առնվազն 4 որակավորման և պարբերական գնահատման գործընթացի կազմակերպում		1500.0	1500.0
4.4	Պետական աջակցություն մարդկային ռեսուրսների զարգացմանը		3000.0	3000.0
5	**Միջազգային համագործակցություն**		9000.0	9000.0
6	**Ծրագիրն իրականացնող կազմակերպության պահպանման ծախսերի ֆինանսավորում**	31645.6	15632.0	47277.6
	ԸՆԴԱՄԵՆԸ	43818.0	179217.0	238667.0
	ԱԱՀ	8766.0	38967.4	47733.4
	ԸՆԴԱՄԵՆԸ	52584.0	218184.4	286400.4